

Armenian Apostolic Church of Cleveland

666 Richmond Road Richmond Heights 24, Ohio • EVERgreen 1-6590

Գլիվլէնտ, 8 Մարտ, 1962

Գերաշնորհ
Տ. Սիոն Արք. Մանուկեան, Առաջնորդ
Առաջնորդարան Հայոց Ամերիկայի
Նիւեռք, Ն. Ե.

Գերաշնորհ Մըբազան Հայր,

Գլիվլէնտի Համայնքին տարեկան ընդհանուր անդամական ժողովը
տեղի ունեցաւ Յունուար 14, 1962-ին, Նախագահութեամբ Արք. Տ.
Առաջակ ՔՀՆՅ. Գասպարեանի եւ Ներկայութեամբ 50 տռատու անդամներու։

Հետեւեալները ընտրուեցան իբրեւ Ծխական Խորհուրդի անդամներ։

Երկու տարուան շրջանի մը Համար, Տիկ. Ռոզ Ազարեան, Ալէքս Պաղտա-
սարեան եւ Վահան Կարապետեան։ Մնացեալ անդամները որոնց շրջանը
կ'աւարտի գալ տարի, հետեւեալներն են.՝ Տքթ. Գեղամ Կէօքճեան,
Արմէն Գազապաշեան, Նուպար Ապտալեան, եւ Գէորգ Ալբանեան։

Ներկայս կը ներկայացնենք Մըբազնութեանդ հաստատման խնդ-
րանքով։

Ցաջողութեան մաղթանքներով, մնամ ի համբոյր ձեր Ս. Աջոյն,

Որդիական սիրով,

Տեխնիկ Արք. Ժայթինչ

Ներսէս Մըկ. Ճէպէճեան,
Նախագահ Ծխ. Խորհուրդի

Կրիստոնյաց

Անն,

Թիւ 4083
Մարտ 12, 1962

Բարեշնորհ
Ներսէս Սրկ. ճէպէճեան
Հոգեւոր Մատակարար Գլիվլէնտի Համայնքին

Սիրելի Ներսէս Մարկառագ,

Առաջնորդ Մըրազան Հայրը ստացած է Մարտ 8 թուակիր Զեր
Նամակը, որով կը հաղորդէիք Համայնքիդ Մխական ժողովի ընտրու-
թեան արդիւնքը ու կը խնդրէիք ընտրուած անձերուն վաւերացման
պաշտօնագիրը:

Յանձնարարուած ենք յայտնելու ձեզի թէ Զեր սոյն նամակին
չէիք կցած տարեկան տեղեկագիրի հարցարանը, զոր լեցնելով պէտք
է դրկած ըլլայիք Առաջնորդաբան:

Հաճեցէք առաջին պատեհութեամբ այդ հարցարանը լեցնելով
դրկել որպէս զի Առաջնորդ Հայրը վաւերացնէ Զեր ընտրութիւնները:

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլ Եան
Դիւանապետ

Զեզի կը դրկենք օրինակ մը եւս ծխական տեղեկագիրի
հարցարանէն, եթէ նախկինը կորսուած է կրնաք ասիկա գործածել:

Թիւ 4130
Մարտ 27, 1962

Բարեցնորհ
Ներսէս Սրկ. ճէպէճեան
Հոգեւոր Մատակարար Գլիվլէնտի Հայոց Համայնքի

Սիրելի Ներսէս Սարկաւագ,

Մեր Մարտ 12 թուակիր նամակով խնդրած էինք Զեզմէ
շուտով Առաջնորդարան ղրկել Զեր Մխական Խորհուրդի տարեկան
տնդեկագիրը եւ Հաշուեկշիռը:

Մինչեւ գրոյս թուականը տակաւին չեն ստացուած այդ
նիւթերը: Հաճեցէք կարեւորութեամբ նկատի առնել այս պարագան,
որովհետեւ Թեմական Պատգամաւորական ժողովի թուականը կը մօ-
տենայ եւ պէտք է ծուխերունյարակից բոլոր նիւթերը պատրաստ
ըլլան մէկ երկու շաբաթէն:

Կանխայաց շնորհակալութեամբ՝

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ